



«26» հունիսի 2011թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 125

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ  
ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 13-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կայացած արտագնա նիստի N 12 արձանագրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2010 թվականի մայիսի 24-ի ՀՀ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին» N 64 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) ուժը կորցրած ճանաչել հրամանի N 1 հավելվածով հաստատված՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով 2010 թվականին պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից 1-սենյականոց բնակարան ստացող ընտանիքների ցուցակի 23-րդ կետը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2010 թվականի հունիսի 17-ի ՀՀ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2010 թվականի մայիսի 24-ի N64 հրամանի մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով

պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին» N 73 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի N 2 հավելվածով հաստատված՝ «Հիրակի մարզի Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով 2010 թվականին պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից 2-սենյականոց բնակարան ստացող ընտանիքների ցուցակի 73-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

73	Երմակով Վալերի Երմոլաեվիչ	1948թ.	AE 0495811, տրված 20.09.2000թ., 016-ի կողմից	5	2
	Երմակովա Վալենտինա Ստեփանովնա	1954թ.	AE 0495814, տրված 16.09.2000թ., 016-ի կողմից		
	Երմակովա Գալինա	1979թ.	AC 0244888, տրված 12.06.1998թ., 016-ի կողմից		
	Երմակովա Հասմիկ Արթուրի	2002թ.	ԱԱ N364175		
	Երմակովա Ալբինա Արթուրի	2004թ.	ԱԱ N016365		

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի հուլիսի 14-ի N 89, օգոստոսի 18-ի N121, 2010 թվականի ապրիլի 7-ի N 46 և 2011 թվականի մարտի 21-ի N 35 հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» N 111 հրամանի 4-րդ կետի 1-ին պարբերության մեջ «2010 թվականի ապրիլի 7-ի» բառերը փոխարինել «2011 թվականի մարտի 21-ի» բառերով:


4. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011 թվականի հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակելի տուն (բնակարան) ստացող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին» N 115 հրամանի 2-րդ կետում «2-սենյականոց» բառերը հանել:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան

Իսկականի հետ ճիշտ է



«26» օգոստոսի 2011թ.